



ՄԱՐՏՈՒՄ ՀԱՂԹԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հողվածում մատչելի ձևով բացահայտվում են ժամանակակից մարտում հաջողության հասնելու պայմանները, նկարագրվում են այն հիմնական գործոնները, որոնք ազդում են հրամանատարների հիմնավորված որոշման կայացմանը, գործնական առաջարկություններ են տրվում մարտական գործողությունները կազմակերպելու, մարտական առաջադրանքները կատարելիս միավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները կառավարելու ուղղությամբ: Ներկայացվում են մի շարք ուսանելի օրինակներ մարտական գործողությունների փորձից:

Ռազմագիտությունը միշտ ելնում է այն փաստից, որ մարտադաշտում մարտավարության հիմքը ստեղծագործականությունն է, որը հիմնված է իրավիճակի կոնկրետ պայմանների խորը հաշվառմամբ, հակառակորդի նկատմամբ յուրային գորքերը ավելի բարենպաստ դիրքերում տեղակայման ունակությամբ, հակառակորդին անսպասելի գործողություններով և արդյունավետ կրակային խոցումով շջմեցմամբ:

Միևնույն ժամանակ, անցկացված մարտավարական գորավարժությունների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել մարտավարական մակարդակի հրամանատարների և շտաբների պատրաստության մի շարք խնդրահարույց հարցեր: Նրանցից շատերը ձգտում են մարտը կազմակերպել դասական կարծրատիպերով, հաշվի չառնելով մարտի ու տեղանքի կոնկրետ պայմանները: Շատերը համարձակություն չունեն այդ օրինաչափություններից հետ կանգնելու և արտառոց որոշում կայացնելու, թեև իրավիճակը դա է պահանջում:

Ձորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների առաջին հայացքից արդյունավետ թվացող որոշումների ու գործողությունների ավելի խորը վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ նրանք ուղղված են առավելապես հակառակորդին դուրս մղելուն, կրում են ուղղագիծ բնույթ և կանխատեսելի են:

Սա վկայում է այն մասին, որ մարտերի կազմակերպման մոտեցումները, որոնց հիմքը կազմում է պատերազմների և զինված հակամարտությունների փորձը, որոշ հրամանատարների կողմից չեն յուրացվել, չեն ընդունվել ի ղեկավարում և չեն դարձել որպես ներքին համոզմունք ու պրակտիկ գործունեության հիմք:

Առաջին հերթին, մարտում հաջողության հասնելու կարևորագույն պայմաններից է իրավիճակի մշտական վերլուծությունը, դրա զարգացման կանխատեսումը և կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը, իսկ որոշ դեպքերում՝ կանխարգելիչ գործողությունների իրականացումը:

Մարտական իրավիճակի արագ և շարունակական փոփոխությունները պահանջում են, որ հրամանատարը կարողանա ժամանակին արձագանքել դրանց: Մարտի ցանկացած պահին իրավիճակը կարող է կտրուկ փոխվել: Որպեսզի հրամանատարը ժամանակին գրագետ արձագանքի պետք է հստակ հասկանա մարտի բնույթը, նրա զարգացման տրամաբանությունը և շարունակաբար վերահսկի մարտական գործողությունների ընթացքը: Հատկապես նշանակալի է հրամանատարի կարևորագույն հատկություններից մեկը՝ հեռատեսությունը: Այն հիմնված է հակառակորդի գործողությունների և մարտավարական իրադրության իմացության, հրամանատարի անձնական մարտական փորձի ու պատրաստվածության վրա, որն ի վերջո, թույլ է տալու կանխատեսել իրավիճակի զարգացումը, հակառակորդի գործողությունները, մարտի ընթացքն ամբողջությամբ և ընդունել հիմնավորված որոշում:

Առանց կանխատեսության մարտի ղեկավարումը հանգեցնում է հակառակորդի անսպասելի հարվածների ետ մղմանը, ինչը բերելու է նախաձեռնության կորուստի և, որպես արդյունք, պարտության:

Հրամանատարը պետք է իրեն դնի հակառակորդի տեղը և կանխատեսի նրա գործողությունների կարգը: Որքան հակառակորդի գործողությունների շատ տարբերակներ վերլուծվեն, այնքան շատ անակնկալներ կհաջողվի բացառել, և ավելի հիմնավորված կլինի որոշումը:

Մարտական գործողությունները ղեկավարելիս հրամանատարը ոչ միայն պետք է տեսնի ռազմի դաշտի այն հատվածը, որտեղ տվյալ պահին ստեղծվել է ամենաբարդ իրավիճակը, այլև կանխատեսի, թե որ վայրում այն կարող է սրվել մոտ ապագայում: Դա թույլ կտա նրան կանխատեսել մարտական գործողություններում կրիտիկական պահերի առաջացումը, ժամանակին ձեռնարկել կանխիչ միջոցներ, որպեսզի հետ մղի գերակշռող հակառակորդի հարվածը և ինքը հարվածներ հասցնի նրա խոցելի տեղերին: Ամեն անգամ, երբ հակառակորդը որևէ գործողություն է ձեռնարկում, նրան պետք է հակադրվեն այնպիսի միջոցներ, որոնք պետք է խափանեն նրա մտահղացումը:

Հակառակորդի կողմից սպառնալիքը պետք է դիմակայվի ոչ թե այն ժամանակ, երբ այն արդեն սկսվել է, այլ դրա առաջացման և զարգացման փուլում: Այս դեպքում պետք է վճռականորեն կիրառվեն կանխիչ միջոցառումներ: Դա թույլ կտա հասնել սահմանված նպատակներին նվազագույն կորուստներով և ռեսուրսների ծախսերով, ինչպես նաև պահպանել մարտավարական նախաձեռնությունը մարտում:

Ժամանակակից մարտում ժամանակի գործոնը կարևոր նշանակություն ունի: Հաջողության է հասնում նա, ով կանխում է հակառակորդին շահեկան դիրքեր գրավելու, մարտակարգերում դասավորվելու, կրակ բացելու և հարվածներ հասցնելու գործում: Ցանկացած տեսակի մարտում՝ լինի դա հարձակողական կամ պաշտպանողական, հրամանատարը պետք է ժամանակ շահի և ստիպի, որ այդ ժամանակն աշխատի իր համար:

Գործելով արագ և սրընթաց՝ հրամանատարը գերազանցում է հակառակորդին և հարվածում նրան այն պահին, երբ հակառակորդը պատրաստ չէ պատասխան գործողությունների կամ գտնվում է անբարենպաստ իրավիճակում:

Ընդհակառակը, գործողությունների դանդաղությունը հանգեցնում է ժամանակի և նախաձեռնության կորստի, թույլ չի տալիս հակառակորդից առաջ ընկնել և հանկարծակիության բերել:

Օրինակ՝ Միրիայում գեներալ Սուխել ալ-Հասանը, ամենակարճ ժամանակահատվածում պատրաստվելով մարտի և մարտի ընթացքում արագ որոշումներ կայացնելով, անընդհատ ստիպում էր հակառակորդին գործողություններում ուշանալ, ինչը նրան թույլ տվեց ջախջախել հակառակորդի զինված կազմավորումները:

Հաղթանակի հասնելու երկրորդ պայմանը նպատակահարմար որոշման ընդունումն է:

Հրամանատարի որոշումը ղեկավարման հիմքն է: Հրամանի, կարգադրության կամ հրահանգի տեսքով ենթականերին հասցնումը գործերին գործի է դնում՝ կազմակերպելով և ուղղորդելով նրանց մարտական խնդիրները կատարմանը:

Ըստ էության, մարտական կառավարման ամբողջ գործընթացը բաղկացած է հրամանատարի կողմից կայացված որոշումների շարունակական շղթայից: Մարտում հաղթանակը լիովին կախված է դրանց նպատակահարմարությունից և հիմնավորվածությունից, ինչպես նաև, թե որքանով են դրանք համապատասխանում իրավիճակին:

Այս կամ այն որոշում կայացնող հրամանատարը միշտ պատասխանատու է դրա կատարման համար: Որոշում կայացնելիս այն պետք է հիմնված լինի իրական իրավիճակի վրա, ունենա սպառիչ և հավաստի տեղեկատվություն: Բայց դժվար և արագ փոփոխվող միջավայրում այդպիսի տեղեկվությունը կարող է չլինել: Միևնույն ժամանակ, մարտի բնույթն ու իրավիճակը միշտ պահանջում է արագ որոշումներ

կայացնել, և հրամանատարն իրավունք չունի խուսափել այդ պարտականություններից: Եվ եթե նա, վախենալով ձախողումից, հապաղում է որոշում կայացնել, ապա մարտական խնդրի կատարումը կվտանգվի:

Կշտամբանքի արժանի է ոչ թե նա, ով, չնայած բոլոր միջոցների ձեռնարկմանը, չկարողացավ հաջողության հասնել մարտում, այլ նա, ով, վախենալով պատասխանատվությունից, կորցրեց ժամանակը և չօգտագործեց առկա բոլոր ուժերն ու միջոցները հակառակորդին ջախջախելու համար:

Որոշման կայացման նպատակահարմարությունը որոշվում է նրանով, թե որքանով է այն համապատասխանում իրադրությանը ու մարտական գործողությունների նպատակներին, որքանով է թույլ տալիս իրականացնել մարտավարական կազմավորման (գորամիավորման, գորամասի, ստորաբաժանման) մարտական ներուժը:

Նպատակահարմար որոշում կարող է ընդունվել միայն ստացված խնդրի պարզաբանումից և իրավիճակի համակողմանի գնահատումից հետո:

Մարտական խնդրի պարզաբանման փուլում հրամանատարը պետք է հստակ պատկերացնի առաջիկա մարտական գործողությունների նպատակը: Մարտերի կազմակերպման նրա բոլոր հետագա գործունեության համար այն պետք է դառնա հստակ կողմնորոշիչ: Փորձը ցույց է տալիս, որ հրամանատարը պետք է տիրապետի մարտավարական իրադրությանը և կողմնորոշվի մարտական խնդիրների լուծման հարցում մեկ-երկու աստիճանով բարձր: Սա թույլ կտա նրան ակտիվորեն գործել մարտում, ինքնուրույն և նպատակահարմար որոշումներ կայացնել ավագ պետի մտահղացման շրջանակներում:

Իրավիճակը գնահատելիս հրամանատարը պետք է ուսումնասիրի հակառակորդին, իր զորքերը, տեղանքը, օդերևութաբանական պայմանները և իրադրության այլ տարրեր: Դրանցից յուրաքանչյուրը ներառում է բազմաթիվ գործոններ, որոնք կարող են ազդել մարտի արդյունքի վրա:

Միևնույն ժամանակ, գրեթե անհնար է գնահատել բոլոր գործոնների ազդեցությունը, քանզի դրանց թիվը կարող է հասնել 150-200-ի: Հետևաբար, հրամանատարի խնդիրն է, իր գիտելիքների և փորձի հիման վրա, այդ ամբողջությունից առանձնացնել հիմնականը, որոնք ուղղակիորեն կազդեն մարտի արդյունքի վրա և բացառել այն, որը այդ պահին երկրորդական են: Ընդ որում, չի կարելի սխալվել:

Հակառակորդին գնահատելիս հրամանատարը միշտ չէ, որ մանրամասն տեղեկություններ կունենա նրա մասին: Հետևաբար, նա պետք է կարողանա իրեն դնել հակառակորդի տեղը, որոշել ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել կրակի համակարգը և մանրի ամենահավանական բնույթը, և այդ դեպքում ավելի հեշտ կլինի կանխատեսել հակառակորդի մտադրություններն ու մտահղացումը:

Պետք է միշտ սպասել, որ հակառակորդն ակտիվ կգործի, պատասխան հարվածներ կհասցնի, կփորձի խափանել պլանները և, ելնելով դրանից, մշակել սեփական մարտի մտահղացումը: Մարտական խնդիրը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է նախապես նախատեսել, թե ինչ դիրք կարող է զբաղեցնել ստորաբաժանումը մարտի այս կամ այն փուլում և նախապես նախանշել գործողությունների տարբերակներ:

Իզուր չէ, որ կա մի ասացվածք, ըստ որի «մարտում հրամանատարը երկու անգամ է հաղթում՝ նախ գլխում, հետո միայն մարտի դաշտում»:

Դրա համար հրամանատարը պետք է ձգտի բացահայտել հակառակորդի պլանները, ներթափանցի իր դեմ գործող հրամանատարի մտահղացման մեջ:

Յուրային գորքերը գնահատելիս պետք է ելնել նրանից, որ ցանկացած հրամանատար միշտ պետք է իմանա իր մարտավարական կազմավորման մարտական հնարավորությունները: Հետևաբար, նա միայն ճշտում է դրանք ստացված մարտական առաջադրանքի առնչությամբ, ինչպես նաև գնահատում տրված և աջակցող ուժերի և միջոցների հնարավորությունները: Բայց նույնիսկ այս հանգամանքը հաշվի առնելով՝ ոչ մի մանրուք չկա յուրային գորքերը գնահատելիս: Գլխավորը իմանալ, թե ինչի է ընդունակ յուրաքանչյուր ստորաբաժանում, դրա պատրաստվածության մակարդակը, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, նրա մարտական փորձն ու այլ գործոններ: Փորձառու ղեկավարները մարտակարգը որոշելիս հաշվի են առնում ենթակա ստորաբաժանումների հրամանատարների հոգեբանական առանձնահատկությունները՝ մեկը հուսալի և արդյունավետ է պաշտպանության մեջ, մյուսը՝ հարձակման մեջ է անկասելի, երրորդը՝ ռիսկի դիմելու ունակ է և ինքնուրույն, ուստի հենց նրան էլ նպատակահարմար է նշանակել առաջավոր կամ մարտարշավային ջոկատներում գործելու համար:

Որոշում կայացնելու համար կարևոր նշանակություն ունի կողմերի ուժերի և միջոցների հարաբերակցությունը:

Նույն հարաբերակցությունը տարբեր կերպ է դրսևորվում պաշտպանության և հարձակման ժամանակ, երբ շրջապատված են հակառակորդի կողմից, կամ մարտեր են վարում անապատում և լեռներում, անտառում և քաղաքում: Այս փաստը պետք է օբյեկտիվորեն հաշվի առնել յուրային գորքերի իրական հնարավորությունները որոշելիս:

Ենթադրվում է, որ հակառակորդին հաղթելու համար անհրաժեշտ է նրա նկատմամբ ունենալ ուժերի և միջոցների թվային գերազանցություն: Մակայն, այս դրույթը միշտ չէ, որ ճիշտ է: Մարտական պրակտիկայում կան բազմաթիվ օրինակներ, երբ ուժերի և միջոցների գերազանցությունը չի հանգեցրել ցանկալի արդյունքների: Հաճախ դրա պատճառը հրամանատարի մարտը կազմակերպելու և մարտական գործողությունների ընթացքում ենթակա ստորաբաժանումները ղեկավարելու անկարողությունն է: Ընդհակառակը, բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ մարտական գործողությունների հմուտ կազմակերպմամբ և մարտում ենթակաների գրագետ կառավարմամբ հաղթանակ կարելի է ձեռք բերել անգամ քանակապես գերազանցող հակառակորդի նկատմամբ:

Մարտավարական օղակում իրավիճակի որոշիչ գործոնը, որը հաճախ որոշում է մարտի ճակատագիրը, տեղանքն է: Տարածքի խորը և մանրակրկիտ ուսումնասիրությունը, դրա դրական և բացասական հատկությունների գնահատումը թույլ է տալիս նախանշել ապագա լուծման ուրվագծերը: Հրամանատարը, ով ի վիճակի չէ հասկանալ տեղանքը, չգիտի, թե ինչպես կարդալ այն, միշտ սխալներ թույլ կտա և պարտություն կկրի մարտում:

Որոշում կայացնելուց առաջ ուսումնասիրելով տեղանքը՝ ստորաբաժանման հրամանատարը պետք է որոշի, թե որքանով է այն նպաստում մարտական խնդրի կատարմանը և ինչ առավելություններ է տալիս հակառակորդին, ինչպես կարող է հակառակորդը օգտագործել տեղանքի ուժեղ կողմերը և ինչ է պետք անել դրան խոչընդոտելու համար: Տեղանքի գնահատման հենց այսպիսի վերլուծական մոտեցումը, նույնիսկ հակառակորդի մասին բավարար տեղեկությունների բացակայության դեպքում, կարող է օգնել նպատակահարմար որոշում կայացնել և նվազագույն կորուստներով կատարել մարտական խնդիրը:

Հաշվի առնելով տեղանքի բնույթը՝ հրամանատարը որոշում է մանևրի ձևը և մարտի մտահղացումը: Հարձակման ուղղության ընտրությունը, մարտակարգի դասավորվածության տարբերակը, հակառակորդի կրակային խոցման հաջորդականությունը և այլ տարրերը նպատակահարմար են միայն այն դեպքում, երբ լիովին համապատասխանում են տեղանքի բնույթին: Պաշտպանական շրջանների, սահմանների և դիրքերի շահավետությունը կրակի վարման համար որոշվում է նաև տեղանքի բնույթով:

Իրավիճակի գնահատման հիման վրա որոշվում են մարտական առաջադրանքի կատարման հաջորդականությունը, հակառակորդին ջախջախելու եղանակները, կրակային խոցման կարգը (մարտի մտահղացումը):

Հարկ է նշել, որ մարտավարության առանցքը մարտավարական կազմավորումների կողմից օգտագործվող գործողությունների մեթոդներն ու միջոցներն են ի շահ մարտական առաջադրանքների, և առաջին հերթին՝ հակառակորդին ջախջախելու համար: Հետևաբար, հրամանատարի պատրաստվածության մակարդակը մեծապես որոշվում է այնպիսի մարտավարական հնարքների զինանոցով և գործողությունների միջոցներով, որոնց նա տիրապետում է:

Ժամանակակից մարտը հրամանատարից պահանջում է գործողությունների այնպիսի մեթոդների և միջոցների կիրառման ունակություն, որոնք թույլ են տալիս առավելագույնս իրականացնել ստորաբաժանման մարտական հնարավորությունները: Դրան կարելի է հասնել միայն ստեղծագործական մոտեցմամբ, որի արդյունքը որոշման նորությունն ու ինքնատիպությունն է, դրա համարձակությունն ու օրիգինալությունը:

Մարտական առաջադրանքների լուծման ստեղծագործական մոտեցումը սպայի մարտավարական հասունության ցուցանիշն է: Դրա բացակայությունը, որպես կանոն, կապված է հրամանատարի որոշումներում և գործողություններում կաղապարի (шаблон) դրսևորման հետ:

Կաղապարը (шаблон) առավել հաճախ դրսևորվում է հակառակորդին վաղուց հայտնի մարտական առաջադրանքի կատարման մեթոդների և միջոցների կիրառման մեջ, որոնք նա ակնկալում է մեզանից, և որոնց դեմ նա գտել է հակազդելու արդյունավետ եղանակներ: Կաղապարային (шаблонные) որոշումներն ու գործողությունները, որպես կանոն, ստեղծված իրադրության մակերեսային, ոչ խորքային վերլուծության արդյունք են: Նրանք միշտ հակասության մեջ են նրա հետ, հեշտությամբ ու արագ լուծվում են հակառակորդի կողմից և, ի վերջո, հանգեցնում են պարտության:

Մարտական կանոնադրությունները մեր սպաներին զինում են մարտական գործողությունների կազմակերպման և մարտական ստորաբաժանումների կառավարման հիմնական դրույթներով: Այնուամենայնիվ, նրանք չեն տալիս և չեն կարող պատրաստի լուծումներ տալ բոլոր առիթների համար: Մարտական իրավիճակի բարդությունն ու բազմազանությունը չեն կարող նախատեսվել որևէ կանոնադրությամբ:

Հրամանատարի համար ղեկավար փաստաթուղթ հանդիսացող մարտական կանոնադրությունները, այնուամենայնիվ, հրամանատարին տալիս են մարտերում ստեղծագործական կարողությունների օգտագործման լայն հնարավորություններ: Մարտական կանոնադրությունների դրույթները չի կարելի վերածել դոգմայի: «Կանոնադրությամբ սահմանված դրույթներն ու առաջարկությունները պետք է կիրառվեն ստեղծագործաբար՝ հաշվի առնելով իրավիճակի հատուկ պայմանները,

...»՝ կանոնադրության այս սկզբունքորեն կարևոր դրույթը պետք է յուրացվի հրամանատարների կողմից:

Սա նշանակում է, որ Մարտական կանոնադրության պահանջների և դրույթների կատարումը կհանգեցնի մարտական հաջողության միայն այն դեպքում, եթե դրանք կատարվեն՝ հաշվի առնելով ձևավորված իրադրությունը:

Նույն հակառակորդի դեմ, բայց իրադրության տարբեր պայմաններում, գործելու եղանակը մի դեպքում կարող է հանգեցնել հաջողության, իսկ մյուս դեպքում՝ պարտության:

Նույն մարտավարական քայլը կարող է արդյունավետ լինել մեկ հակառակորդի դեմ, բայց անօգուտ է մյուսի դեմ:

Նույն մարտավարական հնարքը, թեկուզ և իր արդյունավետությունը հաստատած, որը բազմիցս կիրառվել է նույն հակառակորդի դեմ, ի վերջո կդառնա շաբլոն և կհանգեցնի պարտության:

Այս առումով շատ ուսանելի է Սիրիայում ռազմական գործողությունների փորձի օրինակը: Սիրիայի զինված ուժերի բրիգադի հրամանատար, գեներալ Սուխեյլ ալ-Հասսանը, ընդհանուր առմամբ, նույն խնդիրը կատարելիս՝ բնակավայրերը գրավելիս, թշնամուն ջախջախելու երկու բոլորովին տարբեր եղանակ էր ընտրում:

Մի դեպքում նրան ենթակա ջոկատների հարձակման մեկնարկին նախորդել է երկարատև (երեք օր) կրակային պատրաստություն, որի ընթացքում խոցվեցին հակառակորդի պաշտպանության շրջանում գտնվող բոլոր 29 զրահատեխնիկան: Եվ միայն դրանից հետո բրիգադը անցավ հարձակման և գրեթե առանց կորուստների տիրեց բնակավայրին:

Մյուս դեպքում այդ նույն բրիգադը հարձակման անցավ հակառակորդի հետ անմիջական շփման դիրքից՝ առանց նախնական կրակային պատրաստության, ինչը բացարձակապես տիպիկ չէր սիրիական բանակի համար: Սա կատարյալ անակնկալի բերեց հակառակորդին և թույլ տվեց սիրիացիներին արագ գրավել մեկ այլ բնակավայր:

Մարտական կանոնադրություններում տրված են միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների մարտակարգերի կառուցման տիպային սխեմաներ, դիրքերի և շրջանների սարքավորումների տարբերակներ և մարտական առաջադրանքների կատարման կարգը: Դրանք նախատեսված են առավել ընդհանուր պայմանների համար:

Սակայն, մարտական գործողությունների իրական պայմանները կարող են զգալիորեն տարբեր լինել: Հետևաբար, հրամանատարը պետք է յուրացնի այդ տարբերությունները և հաշվի առնի դրանք որոշում կայացնելիս: Միայն այս դեպքում լուծումը կլինի ոչ ստանդարտ: Եվ եթե նա կուրորեն կիրառում է պաշտպանական դիրքեր կառուցելու նույն սխեման՝ անկախ տեղանքից, հակառակորդի կազմից, լեռներում, հարթավայրում, անապատում և քաղաքում հաշվի չառնելով իր զորքերի մարտական հնարավորությունները, դա կաղապար (шаблон) է, որը չի հանգեցնի հաղթանակի:

Մարտում հաջողությունն անհնար է առանց զորքերի ղեկավարման անընդհատության և կայունության ապահովման: Դրա իրականացումը հրամանատարից պահանջում է ձեռնարկել մի շարք միջոցառումներ՝ ղեկավարման համակարգի կենսունակությունն ապահովելու և դրա անխափան գործունեությունն ապահովելու համար:

Հրամանատարը պետք է հստակ պատկերացնի, թե որտեղից և ինչ միջոցներով պետք է ղեկավարի մարտը նախապատրաստման և վարման յուրաքանչյուր փուլում: Անփոփոխ կանոն պետք է լինի ղեկավարման կետերի տեղակայման վայրերի պարբերական փոփոխությունը, դրանց պահպանությունը, պաշտպանությունը և քողարկումը:

Ժամանակակից մարտում օբյեկտների ղեկավարման համակարգերը կթիրախավորվեն առաջին հերթին: Այս առումով նախապատրաստական փուլում անհրաժեշտ է միջոցներ սահմանել համակարգի խափանման դեպքում վերահսկողությունը վերականգնելու համար:

Բացի այդ, փոխգործողության կազմակերպման ընթացքում ավագ պետի պլանի շրջանակներում պետք է նախատեսվի ենթակա հրամանատարների ողջամիտ նախաձեռնության և անկախության դրսևորում, որը կապահովի ստորաբաժանումների համաձայնեցված գործողությունները ղեկավարման խախտման դեպքում, թույլ կտա նրանց նույնիսկ ավագ պետի հրամանների և հրահանգների բացակայության պայմաններում շարունակել մարտական առաջադրանքի կատարումը:

Հաջող մարտ վարելու **չորրորդ պայմանը ճիշտ պլանավորված և հզոր կրակային խոցումն է:**

Նրա դերը փոխական է: Եթե նախկինում կրակային խոցումն ուղեկցում էր գորքերի գործողություններով՝ պայմաններ ստեղծելով հակառակորդի ջախջախման համար, իսկ բուն ջախջախումն իրականացնում էր համագորային մարտավարական կազմավորումները, ապա այսօր ընդհանուր հաջողության հասնելու գործում զգալիորեն աճել է հակառակորդի կրակային խոցման ներդրումը և գորքերն ավարտում են հակառակորդի ջախջախումը՝ օգտագործելով դրա արդյունքները:

Հետախուզական կարողությունների մեծացման շնորհիվ զգալիորեն աճել է կրակային խոցման հետևանքով հասցված վնասի աստիճանի ցուցանիշները, միաժամանակ նվազել է կրակային առաջադրանքների կատարման համար արկերի ծախսը:

Իր հերթին, դա էապես մեծացրել է կրակային խոցման կազմակերպման, կրակի կառավարման, հետախուզության պահանջները:

Անհրաժեշտ է փնտրել կրակային խոցման արդյունավետության բարձրացման ուղիներ, տիրապետել մարտում գերճշգրիտ զենքի, հետախուզական-հարվածային և հետախուզական-կրակային համալիրների կիրառման եղանակներին:

Ոչ մի դեպքում չի կարելի կրակային խոցումը կառուցել ըստ օրինաչափության, միշտ պետք է ելնել կոնկրետ իրավիճակից:

Դա հաստատվել է մարտական գործողությունների փորձով: Այսպես, օրինակ, փոքր, բայց առանցքային դիրք զբաղեցնող բնակավայրերից մեկի մատույցներում հայտնաբերվել էր ահաբեկիչների ամրացված շրջան, որը պաշտպանված էր մոտ 50 հոգանոց ջոկատով: Անձնակազմը տեղակայված էր ստորգետնյա թաքստոցներում: Մի քանի օրվա ընթացքում, չնայած ավիացիայի բազմաթիվ հարվածներին, կառավարական գորքերին չէր հաջողվում այն վերցնել: Բայց, երբ ԱԹՄ-ների օգնությամբ հաջողվեց բացահայտել ամրացված շրջանի անձնակազմի փոփոխարինման ժամանակը և որոշել հավաքման վայրը, ինչպես նաև հաշվի առնելով հետախուզական տվյալները, պլանավորված և ճշգրիտ ավիացիայի հարված հասցվեց, հակառակորդի ամրացված շրջանն ու բնակավայրը հանձնվեց գրեթե առանց մարտի:

Հաջող մարտական գործողությունների համար անհրաժեշտ պայման է բարձր բարոյահոգեբանական ոգու պահպանումը: Չնայած ժամանակակից մարտը կարելի է անվանել բարձր տեխնոլոգիական, բարոյահոգեբանական գործոնը դեռևս մեծապես որոշում է մարտական գործողությունների արդյունքը:

Մարտական պայմաններում բարձր բարոյահոգեբանական ոգին միավորման, զորամասի, ստորաբաժանման մարտունակության կարևորագույն տարրերից է: Եվ հակառակը՝ անձնակազմի ցածր բարոյահոգեբանական վիճակը երբեք թույլ չի տա իրացնել ստորաբաժանման մարտական հնարավորությունները:

Ահա թե ինչու հրամանատարը մարտական գործողությունների նախապատրաստման և վարման բոլոր փուլերում պետք է անձամբ զբաղվի բարոյահոգեբանական ոգու ամրապնդմամբ:

Մարտական փորձը ցույց է տալիս, որ հրամանատարները, ովքեր հակված են ենթակաների հետ անձնական շփման, առավելագույն հաջողության են հասնում: Միննույն ժամանակ, նրանք պետք է վստահ լինեն իրենց, յուրային ուժերի, ինչպես նաև իրենց կայացրած որոշման ճիշտության մեջ և պարտավոր են ենթականերին ներշնչել այդ վստահությունը, այսինքն՝ ցանկություն առաջացնեն ամեն գնով հասնել մարտական առաջադրանքի կատարմանը և հաղթել մարտում: Կարևորը, որպեսզի առաջին հնարավոր անհաջողությունները չկարողանան բարոյալքել անձնակազմը և խաթարել ստորաբաժանման մարտունակությունը:

Հաջորդ պայմանը մարտի համակողմանի ապահովման մանրակրկիտ կազմակերպումն է:

Ոչ մի լուծում, նույնիսկ ամենաօրիգինալ, հիմնավորված և նպատակահարմար, չի կարող իրականացվել, եթե մարտական գործողությունների համակողմանի ապահովումն ամբողջ ծավալով կազմակերպված չէ:

Համակողմանի ապահովման հարցերում, չնայած դրանց բազմակողմանիությանը, մանրուքներ չկան: Պատմությունը գիտի բազմաթիվ օրինակներ, երբ հրամանատարների գրագետ մտահղացումներն ու որոշումները խափանվել են մարտական պատրաստրաստության փուլում մարտական, տեխնիկական, թիկունքային, բարոյահոգեբանական կամ բժշկական ապահովման որոշակի հարցերի թերագնահատման պատճառով:

Ժամանակակից մարտում **հաջողության հասնելու պայմաններից հաջորդը հակառակորդի կողմից անպատիժ գործողություններ թույլ չտալն է:** Հակառակորդի յուրաքանչյուր գործողությանը պետք է հաջորդի համարժեք արձագանք: Այս պայմանի իրականացումը թույլ չի տա հակառակորդին գրավել նախաձեռնությունը, հասնել բարոյական գերազանցության, մարտադաշտում կաշկանդել գործողությունները և, որն ի վերջո, ուղղված է մտահղացումների և պլանների խափանմանը:

Իրավիճակը գնահատելիս կարևոր է նախատեսել միջոցներ, որոնք ուղղված պետք է լինեն հակառակորդի ուժեղ կողմերի չեզոքացմանը այնտեղ, որտեղ նա ունի գերազանցություն, ինչպես նաև յուրային ուժերի առավելությունների իրացմանը: Դա թույլ կտա հետագայում ժամանակին և օպերատիվ արձագանքել հակառակորդի յուրաքանչյուր գործողությանը և կիսափանի իրադրության զարգացման նրա մշակված սցենարը:

Ժամանակակից մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ **մարտում հաջողության հասնելու** համար *անհրաժեշտ է ակտիվություն և նախաձեռնության անընդհատ պահպանում:*

Մարտի վարման ակտիվության և նախաձեռնության պահպանումը հնարավորություն է տալիս ձեր կամքը թելադրել հակառակորդին, կանխել նրան գործողությունները: Հակառակորդը ստիպված է անընդհատ արձագանքել ձեր գործողություններին և անընդհատ փոխել իր պլանները: Սա, իր հերթին, թույլ չի տա նրան իրականացնել իր գործերի մարտական հնարավորությունները և բացի այդ, բարոյահոգեբանական առումով առավելություն կապահովի հակառակորդի նկատմամբ: Ակտիվությունը դրսևորվում է նպատակին հասնելու ճանապարհին դժվարությունները հաղթահարելու ունակությամբ՝ չնայած նախորդ գործողություններում ունեցած ձախողումներին:

Մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ կարելի է ունենալ գերազանց սպառազինություն, պատրաստված անձնակազմ և գերազանց ներդաշնակված ստորաբաժանումներ, ինչպես նաև կարելի է հասնել հակառակորդի նկատմամբ թվային գերազանցության և, այնուամենայնիվ, պարտություն կրել: Դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ հրամանատարը չունի մարտական ակտիվության զգացողություն, երբ նա սովոր է մարտական առաջադրանքները լուծել առավելագույն խնամքով և գործել պասիվ, առանց ռիսկի:

Մարտական ակտիվությունը չի սահմանափակվում հրամանների պաշտոնական կատարմամբ, այն ներառում է առավելագույն արդյունքների հասնելու բոլոր հնարավորությունները, բնութագրում է վտանգի առկայության պայմաններում ռիսկով գործելու հրամանատարի կարողությամբ՝ ստանձնելով մարտական առաջադրանքի կատարման ողջ պատասխանատվությունը:

Ռիսկը մարտում դա ծայրահեղ վտանգավոր իրավիճակում վճռական գործողությունների պատրաստակամության, ինքնապահպանման բնագործ հաղթահարելու և ցանկացած դժվարությանը համարձակորեն մարտահրավեր նետելու ունակությունն է, եթե դա պահանջում են մարտական առաջադրանքի կատարման շահերը: Ռիսկը մարտում թույլ է տալիս նաև ձախողման հնարավորություն, եթե իրավիճակ զարգանա անբարենպաստ:

Հրամանատարը պետք է հստակ գիտակցի ընդունված որոշման վտանգը և նախատեսի միջոցներ, որոնք հնարավորինս կնվազեցնեն ամենահամարձակ և ռիսկային որոշման անցանկալի ելքի հավանականությունը: Հետևաբար, ռիսկի պատրաստակամությունը պետք է անընդհատ զուգակցվի խոհեմության և զգուշության հետ:

Գլխավորը այն է, որ հրամանատարը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է ողջամիտ և հաշվարկված ռիսկի դիմել, եթե իրավիճակը և մարտական առաջադրանքի կատարման շահերը պահանջում են դա:

Հրամանատարը պետք է համառություն և հաստատակամություն ցուցաբերի որոշումը կատարելու հարցում: Եթե որոշումը կայացվել է, ապա ոչ մի դժվարություն չի կարող պատճառ հանդիսանալ այն մերժելու համար: Ընդունված որոշումներից հաճախակի հրաժարումները և դրանց փոխարինումը նորերով՝ իրադրության աննշան փոփոխությունների պատճառով, ենթակաների մոտ առաջացնում է անվստահություն հրամանատարի մարտական հատկանիշների նկատմամբ:

Միևնույն ժամանակ, հրամանատարը պետք է դրսևորի առավելագույն ճկունություն և իր որոշման գերին չհանդիսանա: Ամեն գնով որոշում կայացնելու ցանկու-

թյունը, որը կորցրել է բոլոր իմաստները, վկայում է իներտության ու կաղապարին (шаблон) հավատարիմ լինելու կամ ընդհանրապես որոշումներ կայացնելու հնարամտության և հմտության պակասի մասին:

Հաստատակամությունն ու համառությունը ողջամիտ են և անհրաժեշտ, քանի դեռ լուծումը համապատասխանում է իրավիճակին և լավագույնն է հնարավորից: Եվ հակառակը, համառությունը, որը պայմանավորված է ոչ թե տվյալ իրավիճակում լուծման նպատակահարմարությամբ, այլ որևէ այլ շարժառիթներով (ինքնավստահություն, սեփական սխալն ընդունելու դժկամություն), վերածվում է կամակորության, ինչը վնասակար է և շատ վտանգավոր հրամանատարի համար:

Մարտում կարևոր նշանակություն ունի հրամանատարի կողմից ողջամիտ նախաձեռնության դրսևորումը: Այն բաղկացած է հրամանատարի մշտական ցանկությունից՝ գտնելու և կիրառելու մարտական առաջադրանքը կատարելու լավագույն միջոցը, ցանկացած իրավիճակում ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակության մեջ՝ նպատակ ունենալով արագ ջախջախել թշնամուն: Հրամանատարի նախաձեռնող գործողությունները, դրանք գործողություններ են՝ առանց ավագ պետի կողմից հուշման և հիշեցման, հրամանատարի պատրաստակամությունը՝ գործելու ոչ միայն իր ստորաբաժանման, այլև ամբողջ գնդի կամ միավորման շահերից ելնելով, հարևանին միշտ օգնելու պատրաստակամությամբ, մարտական առաջադրանքը ավելի կարճ ժամանակում և առավելագույն էֆեկտով կատարելու ցանկությամբ:

Մարտի ընթացքում, շատ հաճախ, մարտավարական իրավիճակը կարող է այնքան փոխվել, որ անիրագործելի և երբեմն նույնիսկ վնասակար կարող է լինել նախկինում ձեռք բերված, բայց արդեն հնացած հրամանի կատարումը: Այս դեպքերում մարտական հրամանի պահանջները ճշգրիտ և խստորեն կատարելու անհրաժեշտությունը պետք է լրացվի հրամանատարի կողմից ողջամիտ նախաձեռնություն ցուցաբերելու ունակությամբ: Նման պայմաններում հրամանատարը պետք է նոր որոշում կայացնի, զեկուցի իր պետին և համառորեն իրականացնի այդ որոշումը:

Այսօր մարտում հաջողությունն անհնար է առանց բոլոր մակարդակներում շարունակական խաբուսիկ գործողություններ կատարելու և հանկարծակիության հասնելու համար նախատեսված միջոցառումների գաղտնիությունն ապահովելու:

Սովորաբար դա նշանակում է գորքերի այնպիսի գործողություններ, երբ նրանք անսպասելի հարված են հասցնում հակառակորդին, անակնկալի են բերում նրան և ստիպում են նրան մարտի մեջ մտնել նրա համար անբարենպաստ պայմաններում, այն պահին, երբ նա պատրաստ չէ կամ չի կարող արդյունավետ հակազդեցություն ցուցաբերել:

Մարտական գործողությունները, որոնք վարվում են հանկարծակիության սկզբունքով շժմեցնում են թշնամուն, կաթվածահար են անում հաղթելու նրա կամքը և թույլ են տալիս փոքր ուժերով կարճ ժամանակում պարտության մատնել նրան:

Միրիայում մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ գրեթե յուրաքանչյուր հաջող մարտական դրվագում կարելի էր նկատել որոշ աստիճանի հանկարծակիության տարրերի առկայություն: Մի դեպքում մարտի ելքի վրա որոշիչ ազդեցություն էր ունեցել կառավարական գորքերի գործողությունների գաղտնիությունն ու քողարկումը, մյուս դեպքում՝ թշնամու համար անսպասելի կրակը, երրորդում՝ հարձակման արագությունն ու սրընթացությունը կամ գործողություններում նոր միջոցների կիրառումը և այլն:

Որքան հրամանատարն ավելի լիարժեք գիտի հակառակորդի իրավիճակն ու մտադրությունները, նրա ուժեղ և թույլ կողմերը, այնքան ավելի լավ արդյունքների էր հասնում հանկարծակիությունը: Վերջինիս հասնելուն, որպես կանոն, նպաստել է հետախուզության արդյունավետ կազմակերպումը:

Բացի այդ, Միրիայի պայմաններում հատկապես կարևոր էր առաջիկա մարտի մտահղացումը գաղտնի պահելը:

Կան բազմաթիվ հնարքներ ու մեթոդներ, որոնց միջոցով կարելի է հասնել հանկարծակիությանը: Յուրաքանչյուր առանձին դեպքում դրանց ինքնատիպությունը կախված է հրամանատարի հնարամտությունից և ստեղծագործական ունակություններից: Փորձը ցույց է տալիս, որ մարտավարական կազմավորումների մարտական գործողություններում հանկարծակիությանը կարելի է հասնել հետևյալ գործողությունների արդյունքում.

- մարտադաշտում ստորաբաժանումների մանևրի կիրառում,
- մարտական գործողությունների սկզբում հակառակորդից առաջ ընկնելու նպատակով մարտական պատրաստության ժամանակի առավելագույն կրճատում,
- հակառակորդի առաջանշանառում (упреждение) կրակի բացման դեպքում,
- գործողությունների գաղտնիության կիրառում, հակառակորդին հարվածելու վայրի և ժամանակի քողարկում,
- զանգվածային հարված հակառակորդի մարտակարգերի առավել խոցելի կամ թույլ պաշտպանված վայրերին, գլխավորապես նրա թևերին և թիկունքին,
- հակառակորդի կրակային խոցման (ավիացիայի, հրթիռային զորքերի հարվածների, հրետանու կրակի) արդյունքների հմուտ և ժամանակին օգտագործում,
- հակառակորդին մոլորեցնելու նպատակով ցուցադրական և խաբուսիկ գործողությունների նոր մարտավարական հնարքների և մարտ վարելու եղանակների կիրառում,
- տեղանքի բնույթի և սահմանափակ տեսանելիության պայմանների (գիշեր, մառախուղ և այլն) ճիշտ և հմուտ օգտագործում:

Անհրաժեշտ է հասնել նրան, որ հակառակորդը, չնայած իր գործադրած ջանքերին, մինչև մարտի սկիզբը չկարողանա բացահայտել մեր զորքերի իրական մտադրությունները, գործողությունների մտահղացումը, կրակի և կառավարման համակարգերը, և որ ամենակարևորն է՝ որոշել մեր գործողությունների ուղիները: Այս առումով գաղտնապահության ապահովմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն բոլոր մակարդակներում և միասնական մտահղացմամբ: Միայն այս մոտեցմամբ հնարավոր է խաբել հակառակորդին և հասնել ակնկալվող արդյունքի:

Հակառակորդը միշտ ձգտելու է հանկարծակիության հասնել: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել: Ուստի, անհրաժեշտ է անընդհատ պայքարել անփութության, պաշտպանության, հետախուզության և մարտադաշտի անձնական դիտարկման հարցերի թերագնահատման դեմ: Զգոնությունը, մարտական զգուշությունը, հակառակորդի գործողությունների կանխատեսումը, նրա մտահղացման բացահայտումը և պատասխան հարվածների մշտական պատրաստվածությունը պետք է առկա լինեն մարտի նախապատրաստման և վարման բոլոր փուլերում:

Եվ վերջապես, **մարտում հաղթանակի հասնելու կարևոր պայման է զորքերի (ուժերի) կիրառման ոչ ստանդարտ, հակառակորդի համար անսպասելի մեթոդների և ձևերի կիրառումը**, այսինքն՝ մարտի մտահղացումը պետք է հիմնված լինի հակառակորդի համար անսպասելի գործողությունների մեթոդի վրա:

Մարտավարության մեջ կան բավականին շատ հնարքներ և մեթոդներ, որոնց միջոցով կարող եք հասնել ձեր նպատակին: Օրինակ՝ դասական հարվածներ թևին և (կամ) թիկունքին, կտրուկ անցում մեկ տեսակի մարտից մյուսին, դարանակալումները, մարտարշավային գործողությունները, ջանքերի անսպասելի տեղափոխումը մի թևից մյուսին, հակառակորդին շեղելը մի ուղղությամբ և հզոր հարվածը մյուս ուղղությամբ, շրջանցումը, ներթափանցումը, մարտական գործողությունների բացազատումը թշնամու պաշտպանության խորքում, ռեզերվների կենտրոնացումը մեկ ուղղությամբ, այնուհետև մանևրելով ռազմաճակատի երկայնքով և նրանց մարտի մեջ մտցնելով մեկ այլ ուղղությամբ: Սա միայն փոքր մասն է, որը հիմնականում վերաբերում է զորքերի տարաշարժմանը և չի վերաբերվում կրակային խոցման մեթոդների բազմազանությանը:

Յուրաքանչյուր առանձին դեպքում նրանց ինքնատիպությունը կախված կլինի հրամանատարի հնարամտությունից և ստեղծագործական ունակություններից: Յուրաքանչյուր սպա պետք է ուշադիր ուսումնասիրի ռազմական տեսությունը, ռազմական բախումների փորձը, հակառակորդին պարտության մատնելու մեթոդների ու մարտադաշտում գործողությունների մարտավարական հնարքները: Ըստ էության, հենց դրանք պետք է կազմեն հրամանատարի «մարտավարական ուղեբեռի» հիմնական մասը:

Մինևույն ժամանակ, կարևոր է մարտավարության զինանոցից բացառել ուղիղ, կանխատեսելի գործողությունները: Այսօր մարտավարության զարգացումը հասել է մի մակարդակի, երբ «ճակատային» գրոհները հրամանատարի ոչ պրոֆեսիոնալիզմի, մարտավարական անհասության ցուցանիշներ են: Դրանք կարող են տեղի ունենալ, բայց միայն բացառիկ դեպքերում: Մակայն նույնիսկ այդ դեպքում էլ հարձակման ժամանակը, կրակային խոցման կարգը, մարտակարգի կառուցումը հակառակորդի համար պետք է անսպասելի լինի:

Ժամանակակից մարտում պետք է գերակշռեն մանևրը և կրակային խոցումը:

Չպետք է լինի հարձակողական կամ պաշտպանական մարտավարության գերակայություն: Մեկ միջավայրում անհրաժեշտ է վճռական հարված հասցնել հակառակորդի գլխավոր խմբավորմանը՝ կտրելով նրա պաշտպանությունը: Մեկ այլ իրավիճակում անհրաժեշտ է հետևողականորեն և նպատակային պայմաններ ստեղծել հակառակորդի վճռական հարվածի և ջախջախման համար՝ կիրառելով այսպես կոչված «անուղղակի գործողությունների» ռազմավարությունը:

Հակառակորդը ևս կիրառելու է նոր ձևեր, մեթոդներ և մարտավարական հնարքներ: Այս առումով անհրաժեշտ է նաև օպերատիվ կերպով մշակել հակառակորդին հակազդելու արդյունավետ միջոցներ և սեղմ ժամկետներում դրանք ներդնել պրակտիկայում:

Հենց այս մոտեցումն է, որ կիրառվել էր Սիրիայում: Ռազմական գործողությունների մի փուլում ահաբեկչական խմբավորումները կառավարական զորքերի դեմ սկսել էին ակտիվորեն կիրառել ականապատ մեքենաներ և զրահամեքենաներ: Ահաբեկիչների մարտավարությունը բավականին պարզ էր. այսպես կոչված «ջիհադ մոբիլը» հանկարծակի մեծ արագությամբ ներխուժում էր ամրացված շարջան կամ պաշտպանական դիրքի կենտրոն, այնուհետ պայթեցվում կամ ինքնապայթեցվում էր, որից հետո զինված ահաբեկչական կազմավորումը գրոհով գրավում էր այն:

Ահաբեկիչների այսպիսի մարտավարությունն արդյունավետ էր այնքան ժամանակ, քանի դեռ կառավարական զորքերը չէին կազմակերպել ականապատված մեքենաների դեմ պայքարի համակարգ: Այն ներառում էր դիտարկման ենթահամա-

կարգեր, ինժեներական արգելապատնեշներ, հեռավոր մատույցներում (ՀՏԿՀ), միջին գծում (տանկեր, ՀՄՄ) և մոտ տարածություններում (ՁՀՆ, հրաձգային զենք) խոցումը, ինչպես նաև պաշտպանության ճեղքերը փակելու համար ռեզերվների ստեղծումը էթե, այնուամենայնիվ, պայթեցումը կատարվում էր: Հակազդեցության միջոցներ ձեռնարկելուց հետո «ջիհադ մոբիլների» կիրառման արդյունավետությունը կտրուկ նվազեց:

Ընդհանուր առմամբ, ժամանակակից մարտում հաջողության հասնելու թվարկված պայմանները պահանջում են, որ բարդ մարտավարական իրավիճակում հրամանատարները հաստատակամորեն և համարձակ գործեն, համարձակորեն ռիսկի դիմեն, մոլորեցնեն թշնամուն, թույլ չտան իրենց ստորաբաժանումների կանխատեսելի, կադապարային (шаблонные) և ուղղագիծ գործողությունները, հաղթեն ավելի ուժեղ թշնամուն ոչ թե ուժերի և միջոցների գերակայության հաշվին, այլ ռազմական արվեստի, զորքերի (ուժերի) օգտագործման արդյունավետ եղանակների հաշվին:

«Դեպի հաղթանակ տանում են ոչ ստանդարտ որոշումները». այս բանաձևը պետք է դառնա ուղենիշ յուրաքանչյուր մարտավարական օղակի հրամանատարի համար: Մարտի կազմակերպման այս մոտեցումը մեր սպաներին պետք է սովորեցնել նպատակամղված: Դրա համար յուրաքանչյուր մարտավարական գորավարժության ժամանակ անհրաժեշտ է ստեղծել իրադրության սուր, ճգնաժամային պահեր և հասնել նրան, որ հրամանատարներն ինքնուրույն և արագ ելք գտնեն ամենադժվար իրավիճակից:

Միննույն ժամանակ, յուրաքանչյուր հրամանատար պետք է վստահ լինի, որ իր ցուցաբերած ողջամիտ նախաձեռնությունը միշտ կգտնի ավագ պետի հավանությունը և կհանդիպի նրա աջակցությանը:

Պետք է ամեն կերպ խրախուսել այն հրամանատարներին, ովքեր ցանկացած խնդիր ձգտում են լուծել ստեղծագործ և ոչ ստանդարտ ձևով:

Աղբյուրը՝ [Герасимов В.В. - Основы победы в бою \(2018\)](#)